



Aghbyur Serob 3a str, 0019 Yerevan
TEL: (010) 22 12 39, (010) 22 12 69
MOB: (099) 386699, (098) 386699
E-Mail: info@globalmedialab.net
WEB-site: www.globalmedialab.net

**Ինտերակտիվ թրեյնինգ
«Հայաստանում և արտերկրում
գործատուին ճիշտ ներկայանալու
հմտություններ» խորագրով:**

Global Media Lab ընկերությունը International Media Holding-ի հովանավորությամբ կազմակերպում է «Հայաստանում և արտերկրում գործատուին ճիշտ ներկայանալու հմտություններ» խորագրով թրեյնինգ:

Վերջինս նվիրված է հայ երիտասարդների շրջանակներում արդի հիմնախնդիր հանդիսացող հայկական և արտերկրյա աշխատաշուկայում պատշաճ ներկայանալու սխալներին, թերություններին և ոչ գործնական մոտեցմանը:

Թրեյնինգը տեղի կունենա փետրվարի 28-ին Ծաղկաձորի Golden Palace հյուրանոցային համալիրում՝ Հայաստանի ամենամեծ նորակառույց կոնֆերանս սրահում:

Ես կարող եմ դիմել թրեյնինգին, եթե.

- ✓ Իմ առաջին քայլերն են անում դեպի աշխատաշուկա և գործատուին պատշաճ ներկայանալու խորհրդավորության կարիք ունեմ.
- ✓ Գիտակցում եմ գործատուին գրագետ դիմելու կարևորությունը իմ հմտություններին և գիտելիքներին համապատասխան աշխատանք գտնելու հարցում՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում.
- ✓ Երիտասարդ մասնագետ եմ և ցանկանում եմ մուտք գործել արտասահմանյան աշխատաշուկա.
- ✓ Ունեմ աշխատանք, որը կատարելագործելու նպատակով ցանկանում եմ մասնակցել արտասահմանյան մասնագիտական ծրագրերի:

Նպատակ և խնդիրներ.

Թրեյնինգի նպատակն է հրավիրված մասնագետների միջոցով մասնակցին փոխանցել այն հիմնական հմտությունները և գիտելիքները, որոնք նա անմիջապես գործի կղնի նոր աշխատանքային հնարավորություններ ձեռք բերելու ակնկալիքով:

Նպատակին հասնելով՝ լուծում ենք արժանապատիվ աշխատանք գտնելու արդի խնդիրը:

Թրեյնինգի ժամանակ քննարկվելու են հիմնական երկու թեմա.

- ❖ CV - ի գրելու ամենատարածված սխալները և ամենակրեատիվ լուծումները
- ❖ Արտասահմանյան նախագծերին և թափուր աշխատատեղերին դիմելու մարտավարություն

Նախագծի պայմանները

Դասընթացի անցկացման վայրը՝ Կոտայքի մարզ, Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փող., 34/1 շենք

Դասընթացի տևողությունը՝ 2 ժամ (սկիզբը ժամը 14:00-ին)

Դասընթացի ձևաչափը՝ ինտերակտիվ

Ամբողջ ծրագրի արժեքը՝ **3 000 ՀՀ դրամ** (ներառյալ ճանապարհածախս)

Գրանցվելու համար գրել info@globalmedialab.net էլ.հասցեին կամ զանգահարել

(010) 22 12 39, (093) 19 73 40

Հարգանքներով՝

Աննա Օրբելի

Թրեյնինգների գծով պատասխանատու

Global Media Lab